**Հարց** Ի՞նչ է արգելվում գազի համակարգի անվտանգության ապահովման համար գազասպառման համակարգի հավաքակցման և օգտագործման ընթացքում:

**Պատասխան** Գազասպառման համակարգի հավաքակցման և օգտագործման ընթացքում արգելվում է.

1.Կատարել գազաթողարկման կատարողական-տեխնիկական փաստաթղթերին և նախագծին չհամապատասխանող միացումներ և փոփոխություններ,

2.Գազը սպառել գազասպառման համակարգի անսարքության դեպքում,

3.Գազը սպառել հաշվառքի սարքի շրջանցմամբ,

4.Խախտել գազատարների և գազասարքավորումների պահպանման գոտիները,

5.Ինքնակամ միացումներ կատարել գազամատակարարման ցանցին, գազն օգտագործել գազօգտագործող սարքավորման տեխնիկական փաստաթղթով (անձնագրով) չնախատեսված նպատակներով: